

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
ST. KEVORK ARMENIAN CHURCH



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

Sunday Bulletin

ԿԻՐԱԿԻ, Յուլիս, 7 2019

SUNDAY, July 7, 2019

9215 SE Church St., Clackamas, OR 97015



ՃԱՇՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ

Մատթեոս 12:38-45

Այն ժամանակ օրենսգետներից եւ փարիսեցիներից ոմանք նրան պատասխան տուեցին ու ասացին. «Վարդապետ, քեզնից մի նշան ենք կամենում տեսնել»: Նա պատասխան տուեց նրանց ու ասաց. «Չար եւ շնացող ազգը նշան է փնտռում. այլ նշան չի տրուի նրան, բայց միայն Յովնան մարգարէի նշանը. որովհետեւ, ինչպէս Յովնանը երեք օր ու երեք գիշեր կէտի փոքի մէջ էր, նոյնպէս եւ մարդու Ռդդին երկրի ընդերքում՝ երեք օր ու երեք գիշեր: Նինուէի մարդիկ դատաստանի ժամանակ այս ազգի դէմ պիտի դուրս գան եւ պիտի դատապարտեն նրան, քանի որ նրանք Յովնանի քարոզութեամբ ապաշխարեցին. եւ ահաւասիկ այստեղ Յովնանից մեծը կայ:

Հարաւի Դշխոն դատաստանի ժամանակ պիտի դուրս գայ այս ազգի դէմ եւ պիտի դատապարտի նրան, որովհետեւ նա երկրի ծագերից եկաւ լսելու Սողոմոնի իմաստութիւնը. եւ ահա այստեղ Սողոմոնից մեծը կայ»: «Սակայն պիղծ ոգին դուրս է ելնում մարդուց, շրջում է անջորդի վայրերում, հանգիստ է որոնում եւ չի գտնում: Այն ժամանակ ասում է՝ դառնամ իմ տունը, որտեղից դուրս եկայ. եւ գալիս է ու այն գտնում դատարկ՝ մաքրուած ու կարգի բերուած: Այն ժամանակ գնում եւ վերցնում է իր հետ իրենից աւելի չար եօթը այլ ոգիներ եւ մտնում ինչպէս եւ այնտեղ. եւ այդ մարդու վերջը լինում է աւելի վառ, քան առաջ էր. այսպէս պիտի լինի եւ այս չար սերնդին»:






GOSPEL READING

Matthew 12:38-45

Then some of the scribes and Pharisees answered, saying, “Teacher, we want to see a sign from You.”

But He answered and said to them, “An evil and adulterous generation seeks after a sign, and no sign will be given to it except the sign of the prophet Jonah. For as Jonah was three days and three nights in the belly of the great fish, so will the Son of Man be three days and three nights in the heart of the earth. The men of Nineveh will rise up in the judgment with this generation and condemn it, because they repented at the preaching of Jonah; and indeed a greater than Jonah is here. The queen of the South will rise up in the judgment with this generation and condemn it, for she came from the ends of the earth to hear the wisdom of Solomon; and indeed a greater than Solomon is here.

“When an unclean spirit goes out of a man, he goes through dry places, seeking rest, and finds none. Then he says, ‘I will return to my house from which I came.’ And when he comes, he finds it empty, swept, and put in order. Then he goes and takes with him seven other spirits more wicked than himself, and they enter and dwell there; and the last state of that man is worse than the first. So shall it also be with this wicked generation.”



ԱՂՕԹՔ

Գրեց՝ Յովնան Արք. Տերտերեան



Յարութեան շունչը Քու անսահմանելի ուժին մէջ է: Նոր շունչին հաղորդ դարձուցիր նաեւ զիս: Դուն ես աղբիւրը կենաց: Իմ հոգու մէջ տեսիլք է դարձած Յարութեան շունչը, այն դարձած է ջահը իմ ողջ էութեան: Յարութեան շունչը դարձուր թթիւմորը քու հոգեւոր կեանքի, ով հաւատացեալ, քանզի այդ շունչն է ոգին նոր կեանքին:

Նորոգող հնութեանց Աստուած իմ անհասանելի. նորոգէ նաեւ իմ անձը յաւիտեանս յաւիտենից: Իմ հոգիէն բխում առնող ամէն աղօթքով Քեզի կը դիմեմ, որպէսզի նորոգես իմ մէջ հին մարդը, եւ նորին առաջնորդես զիս, որուն մէկնակէտը Դուն ես՝ Աստուած յաւիտենակաւ:

PRAYER

By Archbishop Hovnan Derderian



The breath of the resurrection is in your ineffable power. You have allowed me to know this new breath, O Lord. You are the fountain of life. The breath of the resurrection has become a vision in my soul; it has become the torch of my entire being. Make the breath of the resurrection the yeast of your spiritual life, O faithful, for it is that breath the new life of the soul.

Renewer of the old, O Inscrutable God; renew also my person forever and ever. Every prayer emanating from my soul beseeches you to renew the old person in me and lead me to the new person, the core of which is you, O Eternal God.

ԳԻԻՏ ԵՆԽԱՐԱՅ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՆՈՐԴԻ

Գրիգոր Լուսավորչի նշխարների գիտը հայոց ամենամեծ սրբի յիշատակին նուիրուած երեք տօներից մէկն է: Ըստ ասանդութեան՝ հայոց մեծ դարձից յետոյ Ս. Գրիգոր Լուսավորիչն իր կեանքի վերջին տարիներն ասարտում է ճգնակեցութեամբ եւ վախճանում է 326 թուականին: Նրա մարմինը գտնում են հովիւները, ովքեր, չճանաչելով մահացած կաթողիկոսին, մարմինը ծածկում են քարակոյտի տակ: Հետագայում Ս. Գրիգոր Լուսավորիչը տեսիլքով յայտնում է իր նշխարների տեղն աշակերտներից Գառնիկ Բասենցուն, որից յետոյ Հայրապետի նշխարները տեղափոխում եւ ամփոփում են Դարանաղի գաւառի Թորդան գիւղում: Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարները բոլոր քրիստոնէական եկեղեցիների ամենամեծ սրբութիւններից են: Հայոց Հայրապետի նշխարները գտնուելուց յետոյ նրանցից մի մասը իբրեւ սրբազան մասունք տարուել է Վաղարշապատ, Բիւզանդիա, Իտալիա: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահուող Լուսավորչի Ս. Աջը Հայ եկեղեցու կարեւորագոյն սրբութիւններից մէկն է, որով օրհնում է սրբազան միւռոնը: Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարների գիւտի տօնը նշում է Հոգեգալստեան տօնից յետոյ չորրորդ շաբաթ օրը: Տօնի առիթով Հայ եկեղեցին սահմանել է շաբաթապահք:



THE DISCOVERY OF THE RELICS OF ST. GREGORY

In the calendar of the Armenian Church, the discovery of the relics of St. Gregory is an important feast and is commemorated on the Saturday before the Fourth Sunday after Pentecost.

As St. Gregory grew old, he became more involved in solitary life. St. Gregory's favorite spot for seclusion and prayer was a site called "the Caves of Mané," located on Mount Sebuhan near Erzinjan, now in eastern Turkey. This place had previously been the residence of the Virgin Mané, one of St. Hripsimé's companions. It is unclear how long St. Gregory lived there, and when exactly he died. After some time had elapsed, shepherds chanced upon his body and buried him at the spot where they found him, not knowing who he was. During the fifth century, a hermit named Karnig was guided by a vision to the grave of the saint and discovered his relics. It was customary in those days to distribute relics of saints to various churches in different parts, and it seems that the same practice was implemented in St. Gregory's case. Karnig took the body of the saint to the village of Tortan, located to the east of Mount Sebuhan, and buried some of the relics there; the rest were taken elsewhere. On or near St. Gregory's unmarked grave there stood a church, built at a later time and still extant in 1915. The exact site of St. Gregory's grave in Tortan was not known even to visitors in the tenth century; but nine other graves existed inside the church, and were said to belong to King Drtad, his queen Ashkhén, his sister Khosrovitukhd, and other members of St. Gregory's family. These were still extant as late as 1915.

The remaining relics of St. Gregory were later taken to the Monastery of St. John the Baptist in Pakavan, where St. Gregory had baptized King Drtad and the Armenian people in the Aradzani River. The relics were kept in a box and taken out on important occasions. In a.d. 450, when a rumor arose in Armenia that St. Vartan and the Armenian magnates had accepted the Persian religion during their visit to Persia's royal court, the returning

magnates were met by a gathering of priests, noblemen and common people, who held forth the box of St. Gregory's relics as a reminder of their Christian roots. Similar incidents occurred at times of turmoil and joy.

The relics of St. Gregory were later taken and laid beneath the massive columns of the Holy Zvartnots Church, whose ruins are still visible near the airport of Yerevan. The saint's skull was kept separately in a box. At some point the skull was transferred to the West and is now kept in the church of St. Gregory the Armenian in Naples, Italy. (Some other relics of St. Gregory deposited in that location were recently transferred to the Armenian Church by the Roman Catholic Church, as a tribute to the 1700th anniversary of Armenia's conversion to Christianity.) Today, relics of St. Gregory may be found at Holy Etchmiadzin, Holy Jerusalem and Antilias. The relic at Holy Etchmiadzin, encased in an arm-shaped reliquary, is used to bless the Holy Chrism (Muron) once every seven years. It is on display in the treasury of the Holy See.



ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԽԵԼԱՅԻ ՀԱՅՐԸ

Մեծահարուստ հայրը չէր ուզեր որ տղան ամեն բան դիրուծեամբ ստանար, հետեւաբար, իր 18-րդ տարեդարձին օրը կ'ըսէ՝

-Այսօր կ'երթաս և գործ կը գտնես, կ'աշխատիս ու դրամ կը շահիս, ապա թէ ոչ՝ ընթրիքէն զրկուած ես:

Տղան, որ մինչ այդ շատ շփացած մեծցած էր, անմիջապէս կ'երթայ մօրը քով ու դրամ կը խնդրէ. Մայրը՝ չդիմանալով անոր արցունքներուն, կը հանէ ոսկի դրամ մը ու կու տայ տղուն:

Գիշերը տղան այդ գումարը հօրը կու տայ, իբր իր վաստակածը, իսկ հայրը՝ կը խնդրէ որ տղան դրամը ջրհորին մէջ նետէ, եւ տղան կը հնազանդի:

Յաջորդ առաւօտ, հայրը նոյն հրամանը կու տայ տղուն, տղան կրկին կը դիմէ մօրը, մայրը կրկին դրամ կու տայ տղուն, իսկ գիշերը երբ ան իր հօր ցոյց կու տայ իր «շահած» գումարը, հայրը կրկին կը խնդրէ որ երթայ ջրհորին մէջ նետէ, ու տղան կրկին հօրը հրամանը կը գործադրէ:

Բայց հայրը շատ խելացի մարդ էր, ու գիտէր ինչ էր կատարուածը. Ան երրորդ օրը՝ տղուն մօրը կ'ուղարկէ գիւղ իր ծնողքին այցելութեան ու տղայէն նոյն բանը կը խնդրէ: Այս անգամ տղան չէր գիտէր որու դիմէր, կամ ինչ ընէր գումարը ապահովելու համար, հետեւաբար ստիպուած կ'ըլլայ իսկապէս իջնել քաղաք ու խանութպանի մը մօտ որպէս բեռնակիր աշխատիլ: Ամբողջ օրը, ժամերով այնքան կ'աշխատի, կը քրտնի ու կռնակը կը ցաւցնէ որ ընթրիքի ժամուն, հազիւ կը կարենայ հասնիլ տուն: Ան հօրը ցոյց կու տայ վաստակած գումարը ու յոգնած կը նետուի բազմոցին վրայ:

Երբ հայրը կրկին կը խնդրէ որ ելլէ ու գումարը ջրհորը նետէ, տղան կը խենթանայ.

-Չէ՛ հայրիկ չէ՛, ի՞նչ կ'ըսես, գիտե՞ս ինչքան դժուար շահեր եմ այս մէկ ոսկին, հաճիս այսօր չնետենք, մեղք է, խնդրեմ քովս թող մնայ, հաճիս հայրիկ...

Հայրը՝ հասկնալով եղածը, կը ժպտի ու տղուն դառնալով կ'ըսէ՝

-Տեսա՞ր տղաս, միայն երբ արդարօրէն շահած իրաւունքդ կը կորսնցնես, այն ատեն այսքան կը ցաւիս ու կ'ափսոսաս...

Հիմա հասկցա՞ր ինչ կը նշանակէ ճակտի քրտինքով շահուած դրամ...

ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ...

Ձմրան ցուրտ գիշեր մը, աղքատ տղայ մը խանութի մը դիմաց կեցած, ապակիէն ներս կը դիտէր: Տիկին մը հեռուէն անոր բոպիկ ոտքերը նկատելով կը մօտենայ ու ձեռքէն բռնելով զինք կը տանի ներս: Խանութպանէն կը խնդրէ որ տղուն ոտքին չափով լաւ տաքուկ կօշիկներ բերէ նաեւ տաքուկ բաճկոն մը: Տղան զարմացած աչքերով կը դիտէ օտար տիկնոջ:

Բարի տիկինը կ'ըսէ՝ Ասոնք քուկդ են, բարով հագուիս:

Տղան տակաւին ապշած՝ կը նայի կնոջ աչքերուն մէջ ու կ'ըսէ:

-Դուք Աստուածն էք :

Կինը ժպտալով կը պատասխանէ՝ -Ոչ տղաս, ես պարզապէս Անոր զաւակներէն մէկն եմ:

-Ասա՛՛ -կ'ըսէ տղան- Ես վստահ էի որ կապ մը կար ձեր եւ Աստուծոյ միջեւ:



HOME BLESSING

The home is a sacred place where family members maintain and share many values. It is also a place where they are charged and empowered with these values to live a peaceful and God-pleasing life. It is under this roof that all collectively form oneness in spirit and assume an important responsibility in the life of the community. It is in this place where they break bread and share joys and sorrows. Here the presence of the Omnipotent is felt since every family is a miniature of a "Little Church—Ecclesia." In this "Little Church" the inexhaustible love and the very generous blessing of God permeate.

For Home Blessing the priest takes with him wafer and incense, and blesses the bread, the water and the salt provided by the family. These three fundamental elements are essential life-giving gifts for human life. The priest asks from the Omnipotent God not to lessen these three gifts without which life becomes impossible or imperfect.

The bread, the water and the salt are symbols of God's infinite goodness and care. With the blessing of these great gifts the household is enriched spiritually and its existence perpetuated for the service of his Creator. Along with the bread, salt, and bread offered on a tray by the dwellers, the priest places also the wafer stamped with a crucifix and designs of grapes and wheat. The wafer is the presence of Christ in the home. The members of the family can either distribute the wafer among themselves or keep it in a jar along with flour, salt, or rice.

During Home Blessing it is customary to burn incense which symbolizes the burning of our souls with our Lord's love. In his supplication the Psalmist says, "Let my prayer be counted as incense before Thee." Through this ceremony everyone's faith is replenished and strengthened and the Lord's presence is felt.

FOR HOME BLESSING, PLEASE CALL
FR.MASHDOTS KESHISHIAN AT (818) 293-9098.




**Յայտարարութիւն
Հոգեհանգստեան Խնդրանքներ**

Հոգեհանգստեան խնդրանքները
հաճեցէք ներկայացնել մինչեւ
Հինգշաբթի կէսօր, որպէսզի կարելի
լլայ յիշել թերթիկին մէջ:

**Announcement
Requiem Service**

We ask those who wish to have hokehankisd
conducted for their loved ones on a given
Sunday, to please submit their names by
Thursday noon for printing in the Sunday
Bulletin.



Summer Hours, Badarak Starting at 10am

The liturgy (Badarak) will take place at 10:00am instead of 11:00am during the summer months.

We will resume our normal hours starting on Sunday September 8th.

Save the Date

Our annual Vardavar Armenian Picnic will be held at lovely [McIver Park](#) this year on Sunday, July 14th at 1pm.

St. Kevork Church

Annual Vartavar Picnic

Sunday, July 14 – 1:00pm

Join us for good food, games, and fun!

At McIver State Park Cedar Picnic Shelter (located in Estacada, OR, 97023)

We will have a traditional Armenian BBQ, salads, and sweets.

Please bring your own water guns, board or other games, and picnic chairs.

There will be raffle drawing.

Adults \$16
Children 5-12 \$8
Children younger than 5 free
To reserve your tickets contact
Gayane Minasian at 971-244-2693
Karine Eksuzyan at 818-281-5255



Սբ. Գևորգ եկեղեցի
Վարդավառի ամենամյա
ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Կիրակի՝ հուլիսի 14 – կեսօրին՝ ժամը 1:00

Միացե՛ք մեզ՝ վայելելու համեղ ուտելիք, խաղեր և զվարճանք:

McIver State Park Cedar Picnic Shelter (located in Estacada, OR, 97023)

կունենանք հայկական խորոված, աղցաններ և քաղցրավենիք:

Խնդրում ենք ձեզ հետ բերել ջրային հրացաններ, սեղանի կամ այլ խաղեր, ինչպես նաև դաշտային աթոռներ: Տեղի կունենա վիճակահանություն:

Մեծահասակներ - \$16
5 -12 տարեկան երեխաներ - \$8
5 տարեկանից ցածր երեխաներ - անվճար
Տոմսեր ամրագրելու համար կապվել՝
971-244-2693 Գայանե Մինասյան
818-281-5255 Կարինե Էքսուզյան

